

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Հասարակական շարժումը Ռուսիայում. փետրուարի 18-ի կայսերական հրովարտակ. ուսու-ճապոնական պատերազմ: ուսս զինուորի քաջութիւնը. Ռուսիայի քաղաքականութիւնը հեռաւոր Արեւելքում. նոր նուաճած երկիրները. Արեւելեան-Չինական երկաթուղի. նորա տուած վնասները. ուսս ժողովրդի կրթութեան պահանջը. երկրի խառնակ դրութիւնը. գործադուլ եւ ուսումնադուլ. մինիստրների մասնաւոր որոշումը բարձրագոյն դպրոցների մասին. մինիստր իշխ. Խիլկովի առաջարկն ազատ համալսարանների քանալու. ձվքեր պիտի լինին ժողովրդի ներկայացուցիչները. ապագայ ներկայացուցիչների թիւը. սահմանադրական հիմնարկութիւնների ներկայացուցիչների թիւը Ներուպայում. հպատակ ազդութիւնների պահանջները. լեհական պէտիցիա-վրացիների պէտիցիա. Հայոց պէտիցիայի ծրագիր. խոսովութիւններ Գու-ճայիսի եւ Թիֆլիսի նահանգներում եւ Գորուայ գաւառում. Կովկասի պ. կառավարչապետի ուղարկած պատգամաւորութիւնը. պ. Վայրէջքումը Գորուայ խոսովութեան մասին. Հայ զիւղացու տխուր վիճակը եւ նորա արդի կարիքները. Հայրապետական պատգամաւորութիւն եւ Հայոց գործերի վիճակը Պ. Բուրգում. քաղաքային խորհրդի երեք ներկայացուցիչներ եւ այդ առթիւ ծագած վէճը:—Հրատարակչական ընկերութիւն. նոր ամսօրեայ րազիր «Բանբեր Կովկասի»:-Նամակ Նրուանից. ԴԻՏՈՂ:

Հասարակական կեանքի երևոյթները Ռուսիայում ներկայումս այնչափ արագ և երբեմն անսպասելի են յաջորդում միմեանց, որ գրեթէ անհնարին է կանոնաւոր հետեւել նրանց ընթացքին և զարգացմանը: Օր չի անցնում, որ մի որ և է կարևոր խնդիր չի յուզի հասարակութեանը և ստիպի նրան լարել իւր ուշադրութիւնը: Քսան ու հինգ տարի շարունակ թմրած կեանքն արթնացել է և արտայայտում է իւր օրգանիական պահանջները այնպիսի ջղաձգումներով, որոնց երբէք չի տեսել Ռուսիան:

Ռուս-ճապոնական պատերազմը, որպէս գրում են մինչև անգամ պահանդակական ուսս թերթերը, երևան հանց տիրող սեփմի բոլոր թերութիւնները և լուսարանեց պետութեան և ուսս ժողովրդի կանոնաւոր առաջադիմութեան ճանապարհին ցիրուցան սփռուած բոլոր խոչնդոտները: Ներկայումս մենք վրկայ ենք մի այնպիսի հասարակական խոշոր շարժման, որպի-

սին տեղի է ունեցել Ռուսաստանի կեանքում ամբողջ տասնուիններորդ դարի ընթացքում միայն յիսնական թուականներին Սեվաստոպոլի պաշարման և Ռուսիայի պարտութիւնից յետոյ Տարբերութիւնն այն է, որ այժմեան շարժումը աւելի խոշոր խնդիրներ է ասպարէզ հանում և աւելի մեծ պետական նշանակութիւն ունի: Եթէ Ղրիմի պատերազմից յետոյ Ռուս պետութիւնը անմիջապէս ձեռնարկեց տիրող օրէնքների մի քանի կէտերի փոփոխութեանը, այժմեան պահանջները վերաբերում են ամբողջ ռեժիմին և ամբողջ օրէնսդրութեանը: Ճորտերի ազատութիւն, զեմսովոճների կազմակերպութիւն, կանոնաւոր դատարաններ, քաղաքային խորհուրդ—ահա այն մեծ վերանորոգութիւնները, որ կատարուեցին Ռուսիայի կեանքում Ղրիմի պատերազմից յետոյ: Լաւատես հասարակական գործիչները և հրապարակասններն այժմեան շարժումից սպասում են աւելի լուրջ փոփոխութիւններ: Փետրուարի 18-ի Կայսերական ռեակտիպտը յանուն ներքին գործոց մինիստրի բաւական որոշ կերպով շեղում է, որ յերաւի այդ փոփոխութիւնները կը լինին աւելի լուրջ, քան անցեալ դարի յիսնական-վաթսունական թուականների վերանորոգումները:

Այս ռեակտիպտով, ինչպէս և փետրուարի 16-ի Կայսերական հրովարտակով, իրաւունք է տրւում ոչ միայն հասարակական օրգաններին, այլ նոյն իսկ մասնաւոր անհատներին արտայայտել իրանց անկեղծ կարիքները Պետութեան բազմատեսակ պահանջների մասին և ցոյց տալ միջոցներ նրա բազմաթիւ ցաւերը բուժելու համար: Եւ ահա լայնածաւալ Ռուսիայի բոլոր ծայրերից և խորշերից ուղարկւում են դէպի Գահոյքի բարձրութիւնը տարբեր ազգերի, դասակարգերի և շրջանների ցանկութիւնները, որոնք իրանց պէսպէս ձեռքի մէջ պարունակում են մի ընդհանուր ուղղութիւն, ընդհանուր պահանջ, այն է փոխել վարչական սխտեմը երկրի, որ թէ տեսականապէս և թէ երկար տարիների դառն փորձերով հիւանդ է ճանաչուած, նաև փնասակար անպայման: Այսպէս է թելադրում ինքը կեանքը, բնութիւնը և պետութեան յարատև ու ապահով գոյութեան պայմանը:

Ռուս ժողովրդի տնտեսական և բարոյական կարիքների զլխաւոր արտայայտիչներն են բուն ժողովրդի կողմից այսպէս անուանուած համայնքները—(Զեմսովո), քաղաքային ազգաբնակութիւնների կողմից Քաղաքային խորհուրդները: Հպատակ ազգութիւնների փաստաբաններն են իրենց մտքի, խելքի և դիրքի ներկայացուցիչները: Լեհացիներն արդէն ներկայացրել են

իրանց կարիքների ամփոփ ծրագիրը, վրաց ազնուականութիւնը իւր ժողովրդի պահանջների ցուցակը, Ֆինլիանդացիք նոյնպէս: Անշուշտ հայերն էլ, օգտուելով Նորին Կայսերական Մեծութեան տուած իրաւունքից, յետ չեն մնալ ուրիշ ազգութիւններից: Եւ հայերի ցանկութիւնները, հարկաւ, իրենց բնորոշ մանրամասնութիւններով հանդերձ անտարակոյս ոչնչով չեն հակասիլ ամբողջ Ռուսիայի պահանջների ընդհանուր ոգուն:

Ռուս-ճապոնական պատերազմը, որ այնքան տխուր և անյաջող եղաւ Ռուսիայի համար, պատմութեան մէջ կը կազմի վերին աստիճանի խրատական մի բաժին, այն տեսակէտից, թէ որքան մի պետութեան ներքին կեանքը ներգործութիւն ունի արտաքին քաղաքականութեան աջողութեան կամ անաջողութեան վրայ: Այն բազմաթիւ յօդուածները, բոշիւրները, գրքերը, որ երևան եկան այս մի տարի ու երկու ամսուայ ընթացքում, միաձայն ապացուցանում են, որ ոռուս զօրքի անվերջ անաջողութիւնները և ոռուս դիպլոմատիայի տկարութիւնները ներքին տկարութիւնների անմիջական հետևանքներն են: Ռուս զինուորը միշտ քաջ է եղել և քաջ էլ կմնայ, այս մասին երկու կարծիք չը կայ, այս կէտում Ռուսիայի բարեկամների հետ համամիտ են և նրա ամենաոլսերիմ թշնամիները: Մակայն ոռուս զինուորի այժմեան հոգեկան պահանջներն աւելի բարձր են համեմատաբար, քան քսանուհինգ տարի սրանից առաջ, երբ նա կուրօրէն վաղում էր տաճիկ զինուորի դէմ և իւր յաղթական թուրը շողշողեցնում նրա գլխին: Քսանուհինգ տարուայ ընթացքում նրա հոգին ենթարկուել է իւր հայրենիքում այնպիսի յեղաշրջումների, որոնք մի կողմից նրա միտքը ձգել են լուսոյ շողք, միւս կողմից նրա հոգուն ներշնչել են թերահաւատութեան պէս մի բան:

Այժմեան ոռուս զինուորը, մանաւանդ ոռուս սպան ի պատիւ իւր, պատերազմից պահանջում է իմաստ և արդարացուցիչ փաստեր:

Նորերս լոյս տեսաւ Պետերբուրգում Պ. Գօլօվայնովի «Ռուսաստանը Հեռուոր Արևելքում» շատ հետաքրքրական և լուրջ աշխատութիւնը, որ մեծ լոյս է սփռում այն խնդրի վրայ, թէ ինչ իմաստ կարելի է սպասել ներկայ պատերազմից, որ մղոււմ է յանուն Մանջուրիայի: Որովհետև այդ գիրքը իւր տեսակում ամենաիմաստալին է և բոլորովին առանձին պատուաւոր դիրք պիտի բռնի նոյնաման միւս բոլոր աշխատութիւնների մէջ,

աւելորդ չենք համարում մեր ընթերցողներին ծանօթացնել նրա մի քանի հետաքրքրական կէտերի հետ:

Հեղինակը լուրջ բննադատութեան է ենթարկում Ռուսիայի քաղաքականութիւնը Հեռաւոր Արևելքում և ցոյց է տալիս այդ քաղաքականութեան հետևանքները երկրի թէ՛ ներքին և թէ՛ արտաքին վիճակի համար: Նա ասում է. «Կարծիք է տիրում, թէ Ռուսիան Արևելքի հետ ունի հոգեկան ազդակցութիւն, կապուած է նրա հետ աւանդութիւնների ընդհանրութեամբ, ուստի նրա ճակատագրական պարտքն է կենդանացնել քնած Արևելքը, լինել միջնորդ նրա և Արևմուտի մէջ և մտցնել այնտեղ եւրոպական քաղաքակրթութիւն և լուսաւորութիւն: Բայց որպիսի արտաքոյ կարգի ջանքեր, որքան երկարատե ժամանակ է հարկաւոր գործադրել այս նպատակին հասնելու համար Արևելքի հեռաւոր վայրերում, մի քանի հարիւր միլլիօն քնակիչներ ունեցող Արևելքի, որ ունի իւր սեպհական ինքնուրոյն և իւր տեսակի բարձր քաղաքականութիւնը»:

Հեղինակի կարծիքով Արևելքն ինքը կարող էր անմիջապէս, առանց ուրիշների օգնութեան, իւրացնել եւրոպական քաղաքակրթութիւնը Արևմտից, ինչպէս ինքը Ռուսիան 200 տարի սրանից առաջ անմիջապէս դիմեց սկզբնաղբիւրին, չը դիմելով Լեհաստանի օգնութեանը: Ճապօնիան անմիջապէս դիմեց Արևմտի քաղաքակրթութեանը և 30 տարուայ միջոցում այնպիսի յաջող հետևանքների հասաւ, որպիսիներին Ռուսիան չի հասել 200 տարուայ ընթացքում:

Այնուհետև հեղինակը ցոյց է տալիս, թէ Ռուսիան ինչպիսի քաղաքակրթութիւն է տարածել Արևելքում: Պատկերը վերին աստիճանի տխուր և վիրաւորական է: Ռուսը Զինաստան, քաղաքակրթութեան փոկարէն, մտցրել է հարբեցողութիւն, անառակութիւն, կոպտութիւն: Սարբին քաղաքում ամենից ամենից աւելի կազմակերպուած է գողերի ընկերութիւնը, որի դէմ նոյն իսկ ոստիկանութիւնն անզօր է: Մի հեղինակ այսպէս է բնորոշում եկուոր ուսաների ուսացման ձևերը չինացիների վերաբերմամբ. «Երբ ես տեսնում եմ, թէ ինչպէս ամենուրեք ծաղակոծում են չինացիներին, օրինակ հէնց երկաթուղու կայարանում, թէ ինչպէս նրանց հրում են, հայհոյում, ծնծում, գիսակները քաշում, թէ ինչպէս տաշտերը ձգում են շրջավաճառների գլուխներից, թէ ինչպէս խլում են աւազակաբար նրանցից ծխախոտ, ընկոյզ, մրգեր, ինձ թւում է որ այնտեղ եկել են ոչ թէ մարդիկ, այլ արշաւել են շղթայից ազատուած չար շներ, մարդկային մսի ճաշակն առած» (Տես էջ. 132):

Անկասկած Ռուսիան ունեցել է պատճառներ դէպի հեռաւոր Արևելք ձգտելու և այնտեղ տարածելու իւր քաղաքակաշխարհը: Պ. Գոլովաչովն այս պատճառները ինքը բացատրում է, և հերքելով մինչև այժմ միզ յայտնի եղած պատճառները, այսինքն այն, թէ իբր Ռուսիան կամեցել է իւր համար այնպիսի պաշտպանութիւն բաց անել՝ դէպի Արևելք, որպիսին բաց արաւ Պետրոս Մեծը դէպի Արևմուտ և այն, թէ իբր Ռուսիան կարիք ունէ պետութեան սահմաններին միացնելու մի ովկիանոս: Հեղինակն առաջ է բերում պրոֆեսսոր Միգուլինի հետեւեալ տրամաբանութիւնը. «Ռուսիան, ասում է յարգելի պրոֆեսսորը, իւր պարտքերի քանակութեամբ ($6\frac{1}{2}$ միլիարդ ռուբլի) բոլոր պետութիւնների մէջ առաջին տեղն է բռնում: Այդ պարտքերի համար նա վճարում է տարեկան առ նուազը 287 միլիոն ռուբլի տոկոս, բացի դրամագլխի շիջումից: Հարկաւ, այդպիսի մի գումար վճարելու համար հարկաւոր են արտաքոյ կարգի միջոցներ, այն է՝ երկրից դուրս արտայայտել ամեն տեսակի հում նիւթ, մանաւանդ հաց: Իսկ այդ գլխաւոր արդիւնքը՝ դուրս տանելու համար անհրաժեշտ է, որ նրա գինը երկրում կարելոյն չափ էժան լինի: Մինչդեռ էժան հաց արդիւնարեւելու համար անհրաժեշտ է ունենալ վարելահողերի մեծ քանակութիւն, աչքի առջև ունենալով երկրագործութեան այն հնացած սխտեմը, որ ընդունուած է Ռուսիայում շնորհիւ ժողովրդի տգիտութեան:

Այստեղից ահա առաջանում է պահանջ՝ ընդարձակել Ռուսիայի սահմանները ի հաշիւ մերձակայ ասիական երկրների, մեծ մասամբ Չինաստանի: «Բայց որովհետև, ինչպէս ցոյց տուեց ներկայ պատերազմը, շարունակում է պրոֆեսսորը, նոր սահմաններ ձեռք բերելու համար դարձեալ հարկաւոր են նոր փոխառութիւններ և ոչ—ձեռնառու ֆինանսական ձեռնարկութիւններ (ինչպէս օրինակ առևտրական պայմանագիրը Գերմանիայի հետ), ուստի առաջ է գալիս մի տեսակ կախարդական շրջան, որից ելք չը կայ: «Հին պարտքերը շիջելու և նրանց տոկոսները վճարելու համար հարկաւոր է նոր սահմաններ գրաւել, իսկ նոր սահմաններ գրաւելու համար անհրաժեշտ է նորանոր փոխառութիւններ անել և նորանոր տոկոսներ վճարել:

Այն ինչ՝ իրականութիւնը ցոյց է տալիս, որ Ռուսիայի յոյսերը չեն արդարանում: Նոր նուաճուած երկրները փոխանակ օգուտ բերելու ահագին վնասներ են հասցնում Պետութեան գանձարանին: Չինաստանի կողմերում գրաւուած ոչ մի

երկիր բացի խոշոր վնասներից ոչ մի տնտեսական շահ չի բերել Ռուսիային: Այս բանը ապացուցուած է պ. Գօլովաչովի գրքում մի շարք թուանշաններով և անհերքելի փաստերով:

Մանջուրիայի գրաւումը տուել է Ռուսիայի պետական գանձարանին առեւելի վնասներ: Մի կողմ թողած այդ երկրի գրաւման համար արած պարտքերը, վերցնենք Արևելեան Չինական երկաթուղին, որ անցնում է այդ երկրով: Չինաստանի հետ կապուած պայմանագրի համաձայն այդ երկաթուղին 1896 թուականից սկսած 80 տարի լրացած պէտք է անցնի Չինաստանի ձեռքը և վերջինի բոլոր պարտքերը Ռուսիային պիտի ջնջուին: Արևելեան—Չինական երկաթուղին կառուցանող ընկերութիւնը, որի անդամները գլխաւորապէս պետութեան ծառայութեան մէջ գտնուող անձինք են, վայելել է կառավարութեան առանձին հովանաւորութիւնը: Ընկերութիւնը ստացել է Պետութիւնից հետեւել գումարները 1898 թ. 24,800,000 ռ. 1890 թ.—60,367,100 ռ.: 1900 թ.—85,000,000 ռ. 1901 թ.—82,000,000 ռ. ընդամենը 361 միլիոն ռ.

Եւ ընկերութիւնը սոսկալի կերպով ի չարն է գործ դրել կառավարութեան հաւատարմութիւնը: Բաւական է ասել, որ նա իւրաքանչիւր վերստ գծի կառուցման ծախքը ցոյց է տուել 252,000 ռուբլ: Վերջինը երկրագնդի վրայ, կոչում է հեղինակը, չը կայ մի երկաթուղի, որի կառուցումը այդպէս թանգ նստած լինի: Վերջինը ոչ մի տեղ բանուորի աշխատանքն այնքան է փան չէ, որքան Մանջուրիայում և ոչ մի երկաթուղի այնքան վատ և անփոյթ չի կառուցուած, որչափ Մանջուրիայի երկաթուղին: Եւ այդ հարիւրաւոր միլիոնները, որոնց մի երրորդական մասը բաւական էր Ռուսիայում ընդհանուր գրագիտութիւն տարածելու համար, այսօր օդն են ցնդուած: Չը պիտի մոռանալ եւ այն հանգամանքը, որ այդ միլիոնները վերցուած են կենտրոնական Ռուսիայի ժողովրդից, որ այժմ յետին չքաւորութեան մէջ է:

Այսպիսով, շնորհիւ սխալ հասկացուած ներքին քաղաքականութեան, ստեղծուել է մի արտաքին քաղաքականութիւն, որ ծծում է ժողովրդի արիւնը: Սակայն արտաքին քաղաքականութիւնը Հեռաւոր Արևելքում այսօր հանդիպել է այնպիսի մի անյաղթելի խոչնդոտի, որպիսին է Ճապոնիայի զօրքը: Պատերազմը, որ մինչև այսօր կլանել է 2¹/₃ միլիարդ, մի չարիք է, որից որքան շուտ ազատուի Ռուսիան, այնքան աւելի արագ կը բուժուի իւր ներքին և արտաքին խոցերից: Ճապոնիան չէ Ռուսիային յաղթողը, այլ 1000000 ճապոնական ուսուցիչները:

և սրա համեմատ դպրոցները: «Յաղթելու համար, ասում է պ. Գօրօվաչովը, բաւական չէ ունենալ բազմաթիւ և լաւ կազմակերպուած զօրքեր, հարկատր է; որ իւրարամիջիւր զինուոր իմանայ, թէ ինչու համար է կուում; որ նա լինի կրթուած:

Այո, ուսւ ժողովուրդը կրթութեան մեծ պահանջ ունի: Եւ նա զուրկ է խնամքից և հոգացողութիւնից այնչափ, որչափ ոչ մի ժողովուրդ Եւրոպայում: Եւ ահա այդ տեսակ մի տգէտ, աղքատ, խեղճ և ողորմելի ժողովրդի վզին „Нов. Врем.“ „Моск. Вѣд.“ և այլ այսպիսի օրգաններ փաթաթում են այնպիսի դեր, որպիսին շատ բարձր է նրա ուժերից: Միթէ Արևելքում քաղաքակրթութիւն կարող է սովորեցնել ուրիշներին մի տարր, որ ինքը դեռ չի ճաշակել տարրական քաղաքակրթութիւն: Այս հարցին շոշափելի պատասխան է տալիս այդ դրութիւնը, որի մէջ՝ ընկնում է ոտսը իւր երկրի բուն սահմաններից դուրս: Պարզուում է, որ նա ինքը դեռ կարօտ է շատ բաներ սովորելու այն ազգերից ու ազգաբնակութիւններից, որոնց ուսուցիչն է ուզում դառնալ:

Բարձրագոյն իշխանութիւնը Կայսերական բարեհաճ հրամանով կոչ է անում ժողովրդի ներկայացուցիչներին դալ և ձեռք ձեռքի տուած նրա հետ գործել լայնածաւալ երկրի ընդհանուր շահերի համար: Կոչը ուրախութեամբ ընդունուում է այսօր պետութեան բոլոր վայրերում և բոլոր ազգաբնակութիւնների մէջ:

Միաժամանակ ամենուրեք սկսուել են խառնակութիւններ, որ հետեանք ին կեանքի անօրմալ դրութեան: Բարձրագոյն դպրոցները և համալսարանները գրեթէ ամեն տեղ փակուել են: Պրօֆեսօրների մեծագոյն մասը վճիռ է կայացրել չըպարապել մինչև որ իրերի դրութիւնը չը բարեփոխուի: Ուսանողական շարժումները արձագանք են գտնում շատ տեղերում եւ միջնակարգ դպրոցներում, որոնց աշակերտների թոթով լեզուները արտայայտում են մի և նոյն պահանջները, ինչ-որ արտայայտում են ուսանողները: Ծնողները յուզման մէջ են և չը գիտեն ինչպէս խաղաղացնեն իրանց զաւակներին: Ոչ պակաս յուզուած են եւ ուսուցիչները: Ամենուրեք կազմուում են խառն ժողովներ ծնողներից և ուսուցիչներից: Եւ ինչ հոգով ևս ղեկավարուին, ինչ ուղղութիւն ևս տրուին այդ ժողովներին նրանց գլխաւոր եզրակացութիւնը մի է—անհնարին է ներկայ հանգամանքներում կանոնաւոր պարապմունք դպրոցներում:

Պէտք է նրանց փակել մինչև սեպտեմբեր: Այսպէս էլ լինում է մեծ մասամբ:

Հետաքրքրական է այն վճիռը, որ կայացրել է մինիստրների մասնաւոր խորհրդակցութիւնը, որ տեղի է ունեցել մարտի 7-ին երկրագործութեան մինիստր Ա. Ս. Էրմօլովի մօտ: Այդ մասնաւոր խորհրդակցութեան նպատակն է եղել կարծիքների փոխանակութիւն այն հարցի մասին, արդեօք պէտք է փակել մինչև սեպտեմբեր բարձրագոյն դպրոցները այժմ թէ միջոց տալ ցանկացող ուսանողներին պարապել: Որովհետև մինիստրների առանձին խորհրդի այս հարցին բոլոր բարձրագոյն դպրոցների պրօֆեսսորների խորհուրդները պատասխանել են, թէ անհնարին է այժմ դպրոցներում պարապմունքներ շարունակել, ուստի աչքի առջև ունենալով պրօֆեսսորների մեծամասնութեան պարզ ցանկութիւնը, վճռուել է փակել դպրոցները մինչև սեպտեմբեր: Միևնոյն ժամանակ, խորհրդակցութիւնը որոշել է ոչ մի խիստ միջոցների չը դիմել այն ուսանողների վերաբերմամբ, որոնք գործադուլ են արել: Այս հիման վրայ վճռուել է առաջին կուրս ընդունել, ըստ սովորութեան, բոլոր նորեկներին, այսինքն՝ միջնակարգ դպրոցները աւարտածներին, նաև այն ամենքին, որոնք ներկայումս համարուում են առաջին կուրսերի ուսանողներ: Եւ որովհետև այս վճռի իրագործումը կարող է հանդիպել անյարմարութիւնների, տեղի պակասութեան պատճառով, ուստի որոշուած է՝ բարձրագոյն դպրոցներում սեպտեմբերից պարապմունքներ մտցնել եւ առաւօտները եւ երեկոները: Իւրաքանչիւր դպրոցական իշխանութեան իրաւունք է տրուում առանձնակի այս անյարմարութեան առաջն առնելու միջոցներ գտնել:

Հետաքրքրական է նամանաւանդ նոյն ժողովում ճանապարհների հաղորդակցութեան մինիստր իշխ. Խիլկովի առաջարկութիւնը: Իշխանը ասել է, թէ ցանկալի է, որ շատ շուտով Ռուսաստանում ներմուծուի ազատ համալսարանների սիստեմը և որ, վերջապէս, վերացուին դիպլօմները և այն բոլոր իրաւունքները, որ տրոււմ են բարձրագոյն դպրոցների աւարտողներին, այսինքն բոլոր բարձրագոյն ուսում ստացած անձինք ունենան հաւասար իրաւունքներ: Իշխ. Խիլկովի կարծիքով ներկայումս գոյութիւն ունեցող բարձրագոյն դպրոցներն էլ կարելի է վերածել ազատ դպրոցների, տալով պրօֆեսսորների ժողովներին ներքին ուսումնական կարգերի վերաբերմամբ լիովին ազատութիւն, առանց սակայն դիպլօմներ տալու իրաւունքի: Ուսանողներն, օրինակ, կարող են ազատ աշխատել որ

լարօրատօրիայում և որ կարինեթում ևս կամենում են, այն դէպքերում, երբ նրանք չեն կամենալ լսել այս կամ այն պրօֆէսօրի դասախօսութիւնը, բայց մի կուրսից միւսը փոխուելու համար քննութիւնները պահպանուած են, պայմանով, որ ընդունակ ուսանողները կարողանան միաժամանակ քննութիւն տալ երկու կամ նոյն իսկ աւելի կուրսերի համար: Այս նշանակում է, որ մի ուսանող կարող է մի տարուայ ընթացքում փոխել մի քանի կուրսեր: Եթէ պետութեանը հարկաւոր կը լինին բանիմաց պաշտօնեաներ, կարող է առանձին մասնագիտական փորձեր նշանակել այն առարկաների վերաբերմամբ, որոնք հարկաւոր են պաշտօնեային իւր ծառայութեան համար: Բայց պետութիւնը չը պիտի ծառայութեան ընդունի այն անձանց, որոնք գործնականապէս ծանօթ չեն իրանց մասնագիտութեան հետ:

Այսպիսով Իշխ. Խիլկօլը պահանջում է իսկապէս այն, ինչ-որ վաղուց գոյութիւն ունի եւրոպական բոլոր բարձրագոյն դպրոցներում: Այս մի ահագին հարուած է հանգուցեալ Տօլստօյի ներմուծած սեփիմին, այն Տօլստօյի, որ իւր խիստ միջոցներով թմբուեան ենթարկեց ոռու դպրոցները, լսեղտելով նրանց մէջ ամեն մի ինքնուրոյնութիւն: Տօլստօյի սեփիմը քառորդ դար շարունակ գործեց և թէ ինչ տխուր հետևանքների հասցրեց Ռուսիային կրթութեան գործում—այս տեսնում ենք այսօր: Այո, այդ մի սոսկալի, սպանիչ ժամանակամիջոց էր, որ Ռուսիայի դպրոցական պատմութեան մէջ պիտի բռնի տխուր էջեր:

Նորերս մինիստրների Կօմիտէն իւր հեղինակաւոր ձայնով վկայեց, որ Ռուսիայում խաղաղութիւն պահելու քսանուհինգամեայ փորձը ազգաբնակչութեան համար ունեցաւ դառն հետեւանքներ: Նոյն իսկ ներքին գործերի մինիստրութիւնը այն եզրակացութեան է եկել, որ Պետերբուրգից արձակուած հրամանները իրագործելու միջոցին գաւառական վարչութիւնները յաճախ չափից դուրս մեծ եռանդ են ցոյց տուել: Նրանք վարուել են հասարակութեան հետ աւելի դաժան, քան ունէին իրաւունք և իրանց դաժանութիւնը արդարացնելու համար չեն զլացել ամեն անգամ զանազան պատճառաբանութիւններ բերել, որոնց վաւերացումը յաճախ եղել է անհնարին բարձրագոյն իշխանութեան համար: Բանտարկութիւն, հալածանք, գաղտնի և արձակ հսկողութիւն, արքայ-այս բոլորը կատարուել է ըստ մեծի մասամբ անիրաւացի կամ շատ չնչին մեղ-

քերի համար (Բյւ. Բեձ. 61—65): Հասարակութիւնը կրել է բոլոր դառնութիւնները անուր տրտունջով, որովհետեւ իւր ձայնը բարձրագոյն իշխանութեանը հասցնելու միջոց չի ունեցել և եթէ ունեցել էլ է, իւր վիճակը աւելի մեծ վտանգի չհնարեցելու համար լռել է, երկնչելով տեղական վարչութիւններին: Քառորդ դար շարունակ անհատի տարրական իրաւունքները խախտուել են ամեն քայլում: Այն ինչ, այսօր, ինչպէս խոստովանեց նորերս մինիստրների կօմիտէն, «այդ բոլոր խնամութիւնները չեն հասել իրանց նպատակին և երկրի խլրտիչ ոյժերը չեն թուլացել կամ վհատուել» (Ք. Բ):

Հասկանալի է, թէ քանի որ մի այնպիսի հեղինակաւոր գործօն, որպիսին է մինիստրների կօմիտէն, նպատակայարմար չի համարոււմ տիրող կարգ ու կանոնները, վերանորոգութիւնների անհրաժեշտութիւնը դառնում է օրուայ խնդիր: Եւ այն այսօր օրուայ խնդիր է բառիս ամենալայն իմաստով: Հասարակական դառնութիւնների բաժակն արդէն մինչև ծայր լեցուել է, ուրեմն պէտք է շտապել կուտակուած չարիքների փոթորիկը մեղմացնել: (Ք. Բ.)

Ահա այս փոթորիկի առաջն առնելու համար է իսկապէս դիմում լինում ժողովրդի «հասուն ներկայացուցիչներին» օգնութեանը: Այս ներկայացուցիչները պէտք է ժողովուեն Պետերբուրգում և այնտեղ մշակեն ապագայ վերանորոգութիւնների ծրագիրը պետութեան ներկայացուցիչների հետ: Մինչև այժմ որոշուած չէ, թէ ինչ անուն պիտի կրի այդ ժողովը: «Հիմնադիր ժողով», «Ժողովրդական խորհուրդ», «Պետական խորհրդարան» և այլն այսպիսի անուններով են կնքում շատ շատերը ապագայ համաժողովը: Սակայն կարևորը անունը չէ, այլ այն իրաւունքները, որ պիտի տրուին այդ ժողովին: Այդ իրաւունքները տակաւին անորոշ են: Անկասկած է որ ներկայ դրութեան կողմնակիցները ոչ մի ջանք չեն խնայիլ կարելոյն չափ սահմանափակել այդ իրաւունքները և, եթէ հնար լինի, նոյն իսկ գեոսի վերածել նրանց: Հարկաւ, այդ ջանքերը կը հանդիպին հասարակութեան, մամուլի և հասարակական հաստատութիւնների կողմից որոշ ընդդիմադրութեան: Բայց թէ որ կողմի դրօշն աւելի բարձր կը ծածանուի — այս դժուար է գուշակել: Սորերդի որոշուած անագին չափով կախուած կը լինի այն ձևից, որով պիտի Պետերբուրգ հրաւիրուեն ժողովրդի ներկայացուցիչները: Ո՞վքեր պիտի համարուին ժողովրդի ներկայացուցիչներ — ահա այն գլխաւոր հարցը, որ զբաղեցնում է այժմ ամենքին: Այս հարցի լուծումը յանձնարարուած է ներքին գործ-

րի մինխտորին, որին իրաւունք է տրուած իւր կողմից խորհրդակցութեան հրաւիրել ուս կամենայ: Իսկ մինխտորը այժմ կազմում է մի առանձին մասնաժողով այս խնդրի առիթով:

Պետութեան կողմից մինխտորներից մէկը գրեթէ պաշտօնապէս այն կարծիքն է յայտնել, թէ մասնաժողովը ներկայացուցիչներ հրաւիրելու համար օգտուելու է նաև մամուլի ցուցմունքներից և նոյն իսկ ապագայ ժողովում, երևի, կըմասնակցեն և՛ մամուլի ներկայացուցիչները միւսների հետ հաւասար իրաւունքներով: Մտադրութիւն կայ հրաւիրել ամեն մի ազնուականութեան, Գաղաքային խորհրդի և Ձեմստլօի կողմից մի ներկայացուցիչ: Բարձրագոյն կառավարչական շրջաններում տրամադրութիւն չը կայ ժողովը շատ էլ բազմամարդ դարձնելու: Մի քանի բարձրաստիճան անձինք խորհուրդ են տալիս ժողովականների թիւը սահմանափակել 300—400-ով: Բայց այդ թուով մի ժողով կարճը է համարուել 150 միլիօն մի ազգաբնադուութեան ներկայացուցիչ: Առարկողներ կան, թէ խնդիրը քանակութեան մէջ չէ: Սակայն եթէ իւրաքանչիւր Գաղաքային խորհուրդ, նահանգական և գաւառական Ձեմստլօ և իւրաքանչիւր ազնուականութիւն ունենայ մի մի ներկայացուցիչ իսկ, ժողովականների թիւը կըհասնի մի քանի հազարի:

Հետաքրքրական է, թէ Եւրոպայի պետութիւններում ինչ թուով են մասնակցում ժողովրդի ներկայացուցիչները սահմանադրական Հիմնարկութիւններում: Ահա մի քանի տեղեկութիւններ: Անգլիան ունի 41,600,000 բնակիչ 800000 ընտրողներով: Այնտեղ Ներքին Պալատը բաղկացած է 670 անդամից, ուրեմն իւրաքանչիւր անդամ ներկայայացուցիչ է 62,000 հոգու: Աւստրիայում միջին թուով մի պատգամաւոր ներկայացուցիչ է 60,900 հոգու, Բելգիայում—մի պատգամաւոր 40000 հոգու: Ֆրանսիական պալատն ունի 584 անդամ, գերմանական ռայխստագը 397 անդամ, այսինքն 131,000 բնակիչ ունի մի ներկայացուցիչ, Պրուսացոց Պալատում 1 անդամ գալիս է 73000 բնակչի: Ճապոնիայում Ներքին Պալատն ունի 369 անդամ—մէկը 123,000 հոգու վրայ: Միացեալ Նահանգներում պատգամաւորների պալատը բաղկացած է 386 անգամից, որ գալիս է մի ներկայացուցիչ 193,000 բնակիչների վրայ:

Այսպիսով, եթէ անգլիական սիստեմին հետեւելու լինի Ռուսաստանը, ապագայ խորհրդարանը պէտք է ունենայ մօտ 2300 անդամ, իսկ եթէ ամերիքական սիստեմին հետևի—ընդամենը 700 անդամ:

Թէ ինչպէս կը որոշուին այս բարդ խնդիրները — երևի շուտով կիմանանք, երբ ներքին գործերի մինիստր պ. Բուլի-գինի մամնաժողովը կը կազմուի և նրա պարագամունքները կը հրատարակուին:

Չը պիտի սակայն թագցնել այն հանգամանքը, որ Ռուսիայում այս կամ այն ձևի պատգամաւորական ժողով կամ խորհրդարան կազմելը անհամեմատ աւելի բարդութիւնների է հանդիպում, քան որ և է ուրիշ եւրոպական Պետութեան մէջ: Եթէ Աւստրիայում այնքան խառնակութիւններ են տեղի ունենում պատգամաւորների ժողովներում շնորհիւ ազգաբնակչութեան այլազանութեան, Ռուսիան այս տեսակէտից աւելի դժուար հանգամանքների մէջ է: Ճշմարիտ է Պետութեան բնակիչների մեծամասնութիւնը բուն ռուսական տարրից է բաղկացած և այն միշտ պիտի իշխող դեր ունենայ: Բայց, արհամարհել միանգամայն օտարազգիների ձգտումները այնքան էլ դիւրին չէ: Այստեղից ծագում է մի շատ հետաքրքրական և բարդ խնդիր, արդեօք, ապագայ ժողովը կամ պատգամաւորների խորհրդարանը կազմուելիս պէտք է ի նկատի առնուե՞ն ազգութիւնների շահերը, թէ ոչ:

Իսկ հպատակ ոչ ռուս ազգութիւնները արդէն ներկայացրել են Բարձրագոյն իշխանութեան և ներկայացնում են իրանց պահանջները: Լեհացիները, որ իրանց թուով դիրքով և քաղաքակրթութեամբ Ռուսիայում առաջին տեղն են բռնում միւս բոլոր ազգութիւնների մէջ, ներկայացրել են հետևեալ պահանջները, որ տպուած են մայրաքաղաքի լրագիրներում:

«Լեհական Թագաւորութեան շրջանում 40 տարի է գոյութիւն ունին վարչական այնպիսի կարգեր, որոնց ժամանակ ոչ մի կառավարական ձեռնարկութիւն ուղղուած չէ եղել երկրի օգտին, իբր մի ամբողջութեան. 40 տարի է սխտեմատիք կերպով աշխատում են ռուսացնել և անընդհատ ծանր հալածանքի ենթարկել, 40 տարի է գոյութիւն ունի անպատասխան չինօթիկական կամայականութիւն. մեր կեանքի այդ անպայման խիստ անմխիթար ժամանակամիջոցը լցրել է ժողովրդի սիրտը այրող ցաւով և վիրաւորանքի զգացումով:

«Այս պատճառով այժմ, երբ ամբողջ Ռուսական կայսրութիւնը համակուած է վերանորոգութեան անզուսպ ձգտումով և երբ Գահի բարձունքից ևս հնչեց չարիքը, ռուսական պետական կեանքի անկարգաւորութիւններն արմատախիլ անելու կոչը, — լեհ ժողովրդի մէջ էլ այդ հզօր ձգտման և այդ կոչի ազդեցութեան տակ չէր կարող չը ծագել, այժմ աւելի ուժեղ

քան երբ և է, իւր դրութեան անելանելիութեան գիտակցութիւնը:

«Քաղաքական ծանր անյաջողութիւնները սաստիկ կուտրել են մեր ժողովրդի եռանդն ու ոյժերը և գոսացրել նորա կուտուրական կեանքի բոլոր օրգանները: Բայց լին ժողովրդի համար ամենածանր փորձանքն եղաւ մայրենի լեզուի արտաքուսը բոլոր պետական և հանրային հիմնարկութիւններէց և ամենից առաջ՝ դպրոցից:

Վրուս պետութեան դայտնի տակ ապրում է լին ազգի կիսից ոչ աւելին, բայց այստեղ մեզ վերայ ազդում է ամբողջ 20 միլիօն լին ազգն իւր 1000-ամեայ քաղաքակրթութիւնը և այդ ժողովուրդն իւր ամբողջութեամբ և ամեն տեղ,—ինչպէս այստեղ՝ Ռուսիայի սահմաններում, այնպէս էլ երկրի միւս մայրերում ուր ապրում է նա,—անխախտ կերպով ընդունում է մայրենի լեզուն իբրև իւր կուտուրապատմական կեանքի ամենաէական գործիքը, իր քաղաքակրթութեան ամենարժեքաւոր գանձն ու իւր հայրենասիրական խոհերի ամենաթանգ առարկան: Ահա թէ ինչու այժմեան դպրոցի շնորհով յօշոտուած և բարոյապէս խեղաթիւրուած մեր դաւակները, սեպհական դըրդումով, անկեղծ ոգևորութեան թոնիչքով, ի նկատի չառնելով գործնական հետեանքները, հեռացան ուսու դպրոցից, պահանջելով լինական դպրոց,—իրանց հայրերի և նախնիքների դըրդոցը, իբրև սիրող մայր ժողովրդական լուսաւորութեան:

Ոչ մի ոյժ չէր կարող արգելել այդ անխուսափելի պայթիւնը, որ հրիտասարդ սերնդի մէջ երևան եկաւ իբրև պարզ ու բաց արտայայտութիւն այն բողոքի, որը խորապէս թագնուած է նրանց հայրերի և մայրերի սրտերում,—մի բողոք՝ ազգային դիմազուրկ լինելուն, գիտութիւնը աղաւաղելուն և անբարոյականացման դէմ:

Եթէ մեր երկրում պետական վարչութեան իբրև հիմք ծառայելու լինի ոչ միմիայն ոյժը, այլ և նրանում տեղ գտնի լով վերջերս Միւսիստոնների Կօմիտէում հրատարակուած սկզբունքը, այն է հեռացնել չարիքի արմատական պատճառները և չխեղդել լով հետեանքները,—այն ժամանակ համողուած ենք, որ Լեհական Թագաւորութեան համար բարենորոգման առաջին օրէնսդրական քայլը կը լինի լեհերէն լեզուով դասաւանդութեան վերականգնելը մեր երկրի միջնակարգ և բարձրագոյն դպրոցներում, այդ հիմնարկութիւնների թէ մանկավարժական և թէ վարչական անձնաւորութիւնների փոխարէն լեհական ծագումի անձեր նշանակելը, ապահովեցնել հասարակութեան մասնակցութիւնը կրթական գործի վերահսկողութեան մէջ, պաշտպանել այդ գործը քաղաքական և ոստիկանական ազդեցութիւններից և վերացնել դաւանութեան հետ կապուած բոլոր սահմանափակումները:

Այս ճանապարհով կիրականանայ վերջապէս մեր երկրում դպրոցական գործի այն վիճակը, որ նախագծուած էր դեռ Ալէքսանդր II կայսեր 1864 թուի օգոստ. 30 Բարձրագոյն ընկերիպտի մէջ. այդ ընկերիպտում, որ չտալիս է լին երկտա-

աարդութեանը հնարաւորութիւն սովորել իր մայրենի լեզուով»,
ասուած է. «Ձը թոյլատրելով ոչ ինձ և ոչ որ և է ուրիշ անձի
գիտութեան տանաւորը դարձնել քաղաքական նպատակներին
հասնելու գործիքներ, կրթական վարչութիւնները պէտք է աշ-
քի առաջ ունենան միմիայն ծառայել լուսաւորութեանը անկա-
շառ կերպով, մշտապէս բարելաւելով լեհական թագաւորու-
թեան մէջ հասարակական դաստիարակութեան սիստեմները և
բարձրացնելով նրանում դասատուութեան նակերևոյթը»:

Մինք այժմ աւելի ևս համոզուած ենք որ մօտեցել է այդ
նախացուցման իրականանալու ժամը, որովհետև ուսացման
քաղաքականութիւնը 40 տարուայ ընթացքում չը հասաւ իր նը-
կատակներին. նա միայն տանջեց լեհական հասարակութիւնը,
կործանեց նոր բազմաթիւ ոյժերը, որոնք նա հեռացրեց աշ-
խատանքից և ստիպեց զբաղուել մարդկային ամենատարբական
իրաւունքների պաշտպանութեամբ և, վերջապէս ծայրայիղ
կերպով սրեց այն զգացմունքները, որ ինքն աշխատում էր
յատկապէս ըթացնել:

Ներկայացնելով վերոգրեալը Ձեր բարձր գերադանցու-
թեան, մենք կատարում ենք մեր վրայ դրուած պարտականու-
թիւնը, ստորագրութիւններով հաստատուած տասնեակ հազար
ճնողների կողմից այն լեհ աշակերտութեան, որ ամբողջ հոգով
ձգտում է դէպի դպրոցը, որ պէտք է լինի անկախ գիտութեան
օջախ և ոչ քաղաքական և բարոյական տանջանքների վայր»:

Դժբաղդաբար, մենք ձեռքի տակ չունինք Ֆինլանդացիներ
ի դձերի ցանկը:

Կովկասից պաշտօնապէս արտայայտուել են ցանկութիւն-
ներ միայն առ այժմ վրացիների կողմից: Ահա ինչպէս է ամ-
փոփում վրաց ազգաբնակչութեան (Քութայիսի և Թիֆլիզի նա-
հանդների) կարիքները Քութայիսի ազնուականութեան պարա-
զոււն իշխ. Ս. Դ. Մերթելին իւր յիշատակագրում, որ ներ-
կայացրեց Ներքին գործերի մինիստրին փետրուարի 19-ին:

«Վրացոց թագաւորութիւններն ու իշխանութիւնները (Քար
թալինիա, Կախեթիա, Իմէրէթիա, Մինգրելիա, Գուրիան և Ար-
խազիան) սկսած 1801 թուից մէկը միւսի ետևից կապեցին ի-
բանց բաղդը Ռուսաց կայսրութեան բաղդի հետ, ընդունելով
նրա հովանաւորութիւնը որոշ պայմանագրերի հիման վերայ:
Թէ յիշեալ պայմանագրերի և թէ պատմական դէպքերի ընթաց-
քի հիման վերայ, որոնք ուղեկցում էին վրաց կիսանքի այդ ան-
ցողական դրութիւնը, նրանք կամովին ընդունելով Ռուսաց հո-
վանաւորութիւնը, մի գլխաւոր նպատակ ունէին, աղանդել
պատեբազմներից և զբաղուել իրանց հոգեկան ուժերի ամտե-
տական բարեկեցութեան կանոնաւորմամբ և խաղաղ զարգաց-
մամբ:

Անցել է աւելի քան հարիւր տարի այն օրից, երբ վրա-
ցիք մտան Ռուսաց կայսրութեան մէջ, և ամբողջ ժամանակ

վրաց ժողովրդի յոյսերն ի դերն ելան և հիասթափուեցին:

Ռուսաց կառավարութիւնն սկզբներում Աղէքսանդր I կայսեր բերանով յայտարարեց. «Վրաց ժողովրդի ձայնը հարկադրեց մեզ չթողնել և դժբախտութեանց չմատնել հաւատակից ազգը, որն իր բողոքը յանձնարարել է Ռուսաստանի մեծահոգ օգնութեանը: Չեր (վրաց ժողովրդի) զարթած յոյսերն այս անգամ յուսախար չեն լինի: Ոչ ուժերնիս աւելացնելու, ոչ շահադիտական նպատակով և ոչ առանց այն էլ լայնատարած հայրենիքի սահմաններն աւելացնելու նպատակով յանձն առանք վրաստանի կառավարութեան լուծը: Միակ արժանիքը, միակ պատիւն ու մարդկայնութիւնը սրբազան պարտք դրին մեզ վերայ սահմանել Վրաստանում այնպիսի կառավարութիւն, որը կարողանար արդարութիւն հաստատել երկրի մէջ»:

Կենդրոնական կառավարութեան և Կովկասեան ազգաբնակչութեան մէջ աւելի բնական և անկեղծ կապ հաստատելու շահերն ի նկատի առնելով, մենք ներքոյ ստորագրեալներս, վրաց ժողովրդի զանազան խաւերի ներկայացուցիչներս, բազմակողմանի քննելով իրերի ներկայ դրութիւնը, որոշեցինք Նախարարութեանց Յանձնաժողովին հասցնել այն մի քանի անհետաձգելի կարիքների մասին, որոնք ձեակերպուած են ստորև բերուած կէտերում.

Վերացումն այն բոլոր բացառիկ օրէնքների, որոնք վերաբերում են Կովկասին և որոնք խոչընդոտ են հանդիսանում հասարակական կեանքի խաղաղ և կանոնաւոր զարգացման և կազմակերպումն քաղաքացիական կառավարութեան այն ձևով, ինչ ձևով որ վերակազմուած կլինի Ներքին նահանգների կառավարելը:

Մտցնել մեր երկրում «զեմսկի» հիմնարկութիւնները լիակատար ինքնակառավարութեան սկզբունքներով այնպէս, ինչպէս այդ կկազմակերպուի այն նահանգներում, որոնք այժմից արդէն օգտուում են «զեմսկի» ինքնակառավարութեան բարիքներից:

Քաղաքային ինքնավարութիւնների բարեփոխութիւն. այնպէս, որ աւելի ժողովրդականան և ազատուին աղմինիստրացիայի միջամտութիւններից:

Մերձեցնել դատարանը տեղական ժողովրդին և վերականգնել ժողովրդի աչքում դատարանների խախտուած հեղինակութիւնը, մտցնելով երդուեալ դատաւորների ինստիտուտ և ընտրովի դատաւորներ: Տեղական դատաստանական հիմնարկութիւններում պետական լեզուի հետ միասին մտցնել նաև տեղական մարինի լեզուն, որն աւելի մատչելի է ժողովրդին, այդպիսով ընդհանուր պետական արդարադատութիւնը կարող է ունենալ անհրաժեշտ և իսկական ազնուացնող ազդեցութիւն ժողովրդի սովորութիւնների և բնաւորութեան վրայ:

Տարրական, միջնակարգ և այլ դպրոցներում թոյլատրել դասաւանդումը միակ ժողովրդին մատչելի վրաց լեզուով, և պետական լեզուի ուսուցումը պարտադիր անել. մտցնել վրաց լեզու, գրականութեան և պատմութեան դասաւուութիւնը տե-

ղական բարձրագոյն դպրոցներում. բանալ թիֆլիսում և Գու-
թայիսում Համալսարան և բարձրագոյն մասնագիտական դըպ-
րոց. մացնիլ ընդհանուր, պարտադիր և ձրի ուսում ժողովրդի
համար: Լայն իրաւունք տալ մասնաւոր նախաձեռնութիւննե-
րին դպրոցներ և այլ լուսաւորութիւն տարածող հիմնարկու-
թիւններ բանալու համար:

Հեռացնել Վրաստանի կրօնական կեանքից բոլոր սահմա-
նափակումները, որպիսին են աստիճանաբար վրաց լեզուի ար-
տաքսումը եկեղեցական արարողութիւնից, եկեղեցական բարձր
պաշտօններին հասնելու հնարաւորութիւն չտալը վրացիներին,
ծխական եկեղեցական դպրոցներ կառավարելու և հոգւոր բար-
ձր դպրոցներում ընդունուած սիստեմը, առհասարակ այն ճրն-
չումը, որ այժմ թագաւորում է Վրաստանի եկեղեցական վար-
չութեան մէջ և զրկում է վրաց հոգեւորականներին ժողովրդի
հետ ազատ շփուելու և ազդելու հնարաւորութիւնից:

Վերացնել ազմինիստրացիայի պրակտիկայի շնորհիւ մը-
տած սահմանափակումը, որով վրաց ծագում ունեցողների հա-
մար դժուարացած է պետական և հասարակական պաշտօն
ստանալը, պարտադրել տեղական լեզուն իմանալը:

Վրաց ժողովրդի կեանքն ու առողջութիւնը պահպանած
լինելու համար, պէտք է վերականգնել զինուորակոչութեան
հին կարգը, որով տեղացիներից կազմում էին զինուորական
մասեր և մնում էին Անդրկովկասում: Այժմեան ընդունուած
ձեւ՝ նրանց ներքին գաւառները ուղարկել, առաջացնում է զգա-
լի մահացման դէպքեր և հիւանդութիւններ, շնորհիւ կլիմային
և պայմաններին անսովոր լինելուն:

Այդ հանքամանքը դարձնում է զինուորական ծառայու-
թիւնը շատ ծանձրալի և աւերիչ ժողովրդի համար, որը յաջող
հանգամանքներում ուրախութեամբ կկրէր պետութիւնից դը-
րուած պարտաւորութիւնը: Վերջնական լիկվիդացիայի ենթար-
կել ճորտութեան մնացորդները Վրաստանում (Գութայիսի և
Թիֆլիսի նահանգներում) և հաւասարացնել գիւղացոց իրա-
ւունքները միւս դասակարգերի իրաւունքների հետ:

Անհող և սակաւահող գիւղացոց իրաւունք տալ բնակուե-
լու արքունի ազատ հողերի վերայ Անդրկովկասի շրջանում և
վերացնել այն բոլոր արհեստական սահմանափակումները, որոնք
արգելում են այդ իրաւունքի իրագործումը:

Անդրկովկասի վրացի ազգաբնակչութեան վերայ տարածել
այն բոլոր օրէնքները, որոնց նպատակն է՝ ապահովել օրինակա-
նութիւնը կառավարելու մէջ, անձի և բնակարանի անձեռն-
մխելիութիւնը, խղճի ազատութիւնը. լեզուի և մամուլի ազա-
տութիւնը (թէ՛ ուսաց և թէ՛ վրաց լեզուններով), ժողովների,
գործադուների և ընկերութիւնների ազատութիւն: Նոյնպէս
տարածել և այն օրէնքները, որոնց նպատակն է բարելաւել
գործարանների բանուորների դրութիւնը, թէ՛ գործարանական
օրէնսդրութեան բարելամամբ և թէ՛ պետական ապահովագրու-
թեան միջոցով:

Հայերի կողմից թէպէտ առ այժմ պաշտօնական դիմում եղած չէ իրանց կարիքների մասին, բայց տեղական ոռու թերթերից երևում է, որ արդէն Ալէքսանդրօպօլի և Նրևանի քաղաքային խորհրդները վաւերացրել են այն պետիցիայի ծրագիրը, որ պիտի մտերս մատուցուի Ներքին գործերի պ. նախարարին և Կովկասի պ. փոխարքային. մենք առաջ ենք բերում այն ոռու լրագրներից անհելով.

1) Հրակիրի սահմանադրական ընդհանուր ժողով հաւասար ուղղակի և գաղափարաբանութեամբ ընտրուած. Կովկասի ազգաբնակչութեանը առ հարաւորութիւն մասնակցել այդ ժողովում ներքին նահանգների ընակիչների հետ հաւասար իրաւունքով: 2) Մտցնել առանց դասակարգի խտրութեան զեմակի հաստատութիւններ և փոխել քաղաքային պօսթիւնիան աղատ ինքնակառավարութեան հիմունքներով: 3) Մտցնել երդուեալների դատարան բոլոր գործերի համար. չբաց անել նոյն իսկ պետական, կրօնական, պաշտօնավարական և մամուլին վերաբերեալ գործերը, մտցնել երդուեալ հաշտարար դատաւորներ, պաշտպանութիւն նահանգական ընտրութեան ժամանակ և պայմանաւոր պատժումն. թոյլատրել հաշտարար ատեաններում դատավարութիւն տեղական լեզուով, պարտաւորել դատաւորներին իմանալ տեղական լեզուները: Աստիճանաւորների պատասխանատուութիւն միայն օրէնքի առաջ ընդհանուր հիմունքներով: 4) Վերացումն մահուան պատժի: 5) Վերացումն զինուորական դատարանի, ուժեղացրած պահպանութեան և զինուորական դրութեան: 6) Ազգայնացումն հողի: 7) Վերացնել «օրրօչնի ստատեա» և այդ հողերը յատկացնել տեղական սակաւահող և անհող գիւղացոց. 8) ընդհանուր պարտադիր և ձրի տարրական ուսում Կովկասում. լիակատար ազատութիւն մասնաւոր ձեռնարկողներին «սպա յայտնելու» կարգով ամեն տեսակի զրպրոցներ բանալիս, որոնք վայելէին պետական զպրոցների հետ հաւասար արտօնութիւն և իրաւունք. պարտադիր դարձնել տարրական զպրոցներում դասատուութիւնը մայրենի լեզուով, մայրենի լեզուի, պատմութեան և գրականութեան դասաւանդումը միջնակարգ զպրոցներում միւս առարկաների հետ համազօր իրաւունքներով, հաւասարեցնել տեղական լեզուների դասատուների իրաւունքներն ու արտօնութիւնները միւսների իրաւունքի հետ: 9) Անյապաղ բանալ հայոց ծխական զպրոցները, բարեգործական լուսաւորութիւն տարածող և հասարակական հիմնարկութիւնները նոյն հիմունքներով, ինչպէս էին մինչև փակելը: 10) Բանալ Թիֆլիսում Բարձրագոյն զպրոց, գլխաւորապէս համալսարան, երկու սեռի անձանց համար արեւելեան բաժնով: 11) Հաստատել հասարակական վերահսկողութիւն զպրոցներում: 12) Ազատութիւն խօսքի, գործադուլի, ժողովների, համախմբումների, ընկերութիւնների և լեզուի ազատութիւն այդ ժողովների ժամանակ, ազատել լրագրութիւնը ցենզուրայից և պատասխանատու անել միայն

դատարանի առջև անձի և բնակարանի անձեռնմխելիութիւնը: 13) Մտցնել 8 ժամուայ աշխատանք և պարտադիր պետական ապահովագրութիւն, որոշել աշխատանքի վարձատրութեան ամենանուազ չափը: 14) Կատարեալ հաւասարութիւն կանանց և մարդկանց իրաւունքների, ոչնչացում դասակարգների: 15) Մտցնել քաղաքացիական պատկ: 16) Փոխարինել պօլիցիական պահակը զեմսկիով նախկին հիմունքների վերայ: 17) Յանձնել քաղաքական պօլիցիան քաղաքային վարչութիւններին և հաւասարացնել Կովկասի քաղաքների իրաւունքը ներքին նահանգների քաղաքների հետ, դինուորական բնակարանային տուրքի վերաբերմամբ: 18) Տալ իրաւունք բազայայտնելու» կարգով բանալ ամեն տեսակ մարդասիրական, հրատարակչական և այլ լուսաւորութիւն տարածող հիմնարկութիւններ և պարբերական հրատարակութիւններ: 19) Վերացնել բոլոր դաւանական և կրօնական սահմանափակումները. ազատութիւն խղճի, բոլոր պետական և հասարակական տեղերում երգումն մայրենի լեզուով: 20) Վերականգնել Հայոց եկեղեցու ինքնուրույն իրաւունքները նրա նախնական կանոններով. հաւասարեցնել մահմեդական հոգևորականների իրաւունքները քրիստոնեաների հետ: 21) Վերադարձնել հայոց եկեղեցական, վանական, նախկին ծխական դպրոցների և սեմինարիաների կալուածներն ու զբաղակալները: Վերադարձնել մեջտեղի բերված վաղուֆական կալուածները: 22) Տեղացիներին թոյլատրել զինուորական ծառայութիւնը կատարել միայն Կովկասի սահմաններում. կարճել ծառայութեան ժամանակը երկու տարով և լայնացնել ուսանողների արտօնութիւնները: 23) Ներմուծել շնորհել այն բոլորին, որոնք վարչական կարգով արտօնուած են Կովկասից: 24) Վերացնել անցագիրների սխտեմը: 25) Հանրայնացնել անտեսական ձեռնարկութիւնները պետական վարկի օգնութեամբ: 26) Մտցնել ընդհանուր եկամտային պրօգրեսսիվ հարկ: 27) Վերացնել ակցիզը անհրաժեշտ առարկաների համար, իսկ երկրորդականների նկատմամբ հասցնել մինիմումի, ամենաքիչ չափերի: 28) Վերացնել պետական նշանակովի տանուտէրութիւնը:

Ռուսիայի ներքին նահանգներում ծագած շարժումը բնականաբար արձագանք պիտի գտնէր և Պետութեան ծայրերում: Այս կողմից Կովկասն էլ յետ չը մնաց: Անցեալ անգամ մենք նկարագրեցինք հարիւր հազար բնակիչ ունեցող Գուրիայի մէջ եղած խառնակութիւնները: Նոյնանման խառնակութիւններ ծագել են այժմ եւ Քուրթայիի նահանգի ուրիշ կողմերում նաև Թիֆլիսի նահանգում: Առանձնապէս աչքի է ընկնում Գորու գաւառի զիւղական ազգաբնակչութեան լայնածաւալ շարժումը: Թիֆլիսի ոռու լրագրների հաղորդած կցկտուր տեղեկութիւններից կարելի է եզրակացնել, որ այդ գաւառում ամեն ինչ տակն ու վրայ է լինում այժմ: Անհաշիւ սպանութիւններ, կո-

ղոպուտներ, հրդեհներ, ամբոխային յարձակումներ յաջորդում են միմեանց այնպիսի արագութեամբ, որ անկարելի է մի առ մի արձանագրել: Գիւղացիները այրում են կամ քարուքանդ անում կալուածատէրերի տները, սպանում են պետական պաշտօնեաներին, վռնդում են իրանց միջից քահանաներին, որ ներկայումս մի նոր տեսակի կեղեքիչ մարմին են կազմում գիւղացիների համար, շատ կալուածատէրեր, թողնելով անտէր իրանց հողերն ու կալուածները, փախել են և պատսպարուել Գօրիում, Գութայիսում և Թիֆլիսում: Գիւղացիները թողել են իրանց դաշտային գործերը և ահագին խմբերով թափառում են գիւղից գիւղ, ամենքին հարկադրելով միանալ իրանց և արտայայտել մի ընդհանուր բողոք:

Ի՞նչ են պահանջում այդ մարդիկ—այս հարցը պարզելու համար հովկասի կառավարչապետի պաշտօնակատար գեն. Մալաման, մի առանձին պատգամաւորութեան խնդրով, Գօրու գաւառն ուղարկեց բանիմաց համարուած մի պաշտօնեայ, Ե. Գ. Վայդենբաումին և Թիֆլիսի գաւառապետ իշխ. Լ. Ջանդիերուն: Դժբաղդաբար, այս անձինք չըկարողացան ոչինչ անել և, մի քանի օր գաւառում պտտելուց յետոյ, վերադարձան ձեռնունայն:

Ահա ինչ է սսում Վայդենբայում իւր առաքելութեան մասին: Եւ ես տեսնուեցի գրեթէ բոլոր գիւղային համայնքների ներկայացուցիչների հետ, բացի լեռնականներից: Իմ ճամբորդութեան սկզբում գիւղացիները շատ ազատ և մանրամասն արտայայտում էին իրանց գիւղական կարիքները, գլխաւորապէս ցոյց տալով հարկերի ձանրութիւնը: Նրանք ասում էին, որ այլ ևս անկարող են տանել այդ հարկերը: Ճաւակցաբար, այս տեսակ անկեղծութիւն ես տեսայ գիւղացիների կողմից առաջին երեք օրերը, այնուհետև Թիֆլիզից և ուրիշ տեղերից եկան զանազան անձինք և, գիւղացիներ ձևանալով, առաջարկեցին այնպիսի ծրագրներ, որ շատ հեռաւոր կապ ունին գիւղացիների իսկական կարիքների հետ, օրինակի համար, թէ պէտք է եկեղեցին անջատել պետութիւնից, կանանց հաւասարութիւն տալ, բաց անել Թիֆլիսում համալսարան և այլն: Գիւղացիների առանձին փորձերը՝ յայտնելու իրանց իսկական կարիքները՝ իսկոյն և հիթ խլանում էին աղմուկով և գոռում գոչիւններով:

Վերջը գիւղական համայնքները նոյնիսկ հրաժարում են ժողովուել պ. Վէյդենբաումին բաղատութիւններ տալու: Սուրամի բաժնում մարտի 13-ին նախ քան պ. Վէյդենբաումի

գիւղացիներին հետ խօսելը, ժողովը ցրում են: Այնուհետև գալիս են օսերի ահագին խմբեր թւով մօտ 8000 հոգի և, գիւղից գիւղ շրջելով, վռնդում են կալուածատէրերի գործաւորներին և ծառաներին:

Չը նայելով այս խոչնդատներին, պ. Վէյդենբաուսն, իւր ասելով, կարողանում է պարզել, որ գիւղացիները չեն ուզում ունենալ մեծ կազմով գիւղական համայնքներ, ի նկատի ունենալով, որ պաշտօնակատար անձանց ոռճիկ տալն ու պահելը չափազանց թանգ է նստում: Առանձնապէս գիւղացիները գանգատուում են կալուածատէրերի և պետական ճնշումների վրայ, որոնք սահմանափակում են նրանց իրաւունքները՝ անտառներից և արօտատեղերից օգտուելու: Ընդհանրապէս, գիւղացիների տնտեսական վիճակը անտանելի է և պահանջում է շուտափոյթ օգնութիւն:

«Ես համոզուած եմ խորապէս, ասում է պ. Վայդենբաուսը, որ գիւղացիները կը խաղաղուին, երբ նրանց իսկական կարիքներին լիացում կը տրուի: Ներկայումս նրանց դրութիւնը իրօք որ շատ ծանր է: Նրանք հագնում են ցնցոտիներ. առաջին օրերը. երբ ժողովներն ընթանում էին կանոնաւոր, գիւղացիներն ինձ ասում էին, թէ իրանք ապստամբներ չեն, այլ Ռուսաց Կայսեր հպատակներ են, որ վարում են ողորմելի կեանք: «Մեր ձեռները,—ասում էին նրանք,—մշտապէս զբաղուած են աշխատանքով միայն նրա համար, որ վճարենք ծանր հարկեր պետութեանը, կալուածատէրերի համար. մենք ոչինչ չենք կարողանում յետ գցել»:

Արդարև, ծանր է գիւղացու տնտեսական կացութիւնը: Տխուր հառաչանքներ լսում են ոչ միայն Վրաստանից, այլ և Կովկասի բոլոր անկիւններից:

Իսկ հայ գիւղացին: Վերջին քսանուհինգ տարիների ընթացքում մի շարք կարգադրութիւններ հասցրին նրան ծայրահեղ աղքատութեան: Հողի սակաւութիւնը ճնշում է նրան ամենուրեք: Այն ինչ՝ ազատ արքունական հողեր կան Կովկասում: Ով գէթ մի անգամ պատել է Ղարսի շրջանը, տեսած կը լինի ընդարձակ, պարարտ վարելահողեր, որոնք մնում են ամայի, և միայն խոտ են արտադրում: Մինչդեռ կից առ կից Ախալքալաքի գաւառում գիւղերը նստած են միմեանց վրայ և հերկում են քարքարոտ անբերրի հողեր, որոնք վաղուց են հիւթասպառ եղել, այնքան շահագործուել են: Միայն հասկացուած քաղաքականութիւնը այդ հողերը պահում էր ուս գաղթականների

համար, Իսկ ռուս գաղթականները սակաւ բացառութեամբ, փախչում են այդ վայրերից, չըզիմանալով երկրի կլիմայական պայմաններին: Տեղական գիւղացին նախանձով է նայում այդ պարարտ և ամայի հողերի վրայ և նրա վտիտ կրծքի տակ կուտակոււմ է մաղձ ու թոյն: Նա անզօրութիւնից ծանր հառաչանքներ է արձակում: սրտի խորքում վշտացած, որ իրան չեն ուզում հասկանալ, ճանաչել և իմանալ, որ չը կար գուցէ ամբողջ Ռուսիայում աւելի հաւատարիմ հպատակ տարր, քան հայը և հայ գիւղացին...

Այսպէս է հայ գիւղացու ճակատագիրը Կովկասում: Երբ հայ հասարակութիւնը, օգտուելով Կայսերական Բարձրագոյն թոյլաւութիւնից, կրներկայացնի Պետերբուրգ իւր անհրաժեշտ կարիքների ցուցակը, կըպարզուի, որ շատ մարդկային տարրական իրաւունքներից է նա զրկուել վերջին քառորդ գարում: Անհասկած, կը լսուի և մեր հառաչանքը, մեզ վերայ ևս ուշադրութիւն կըդարձնեն, որովհետև այս ոչ միայն մեր շահն է պահանջոււմ, այլ և գլխաւորապէս, ընդհանուր Պետութեան շահերը: Պէտք է լինել միանգամայն անկեղծ, քանի որ մեղանից պահանջոււմ է անկեղծութիւն: Եւ մենք կըլինինք անկեղծ նախ մեր անմիջական իշխանաւոր նոր նշանակուած փոխարքայ իշխան Վարանցով-Գաշկովի առջևը, ապա Պետերբուրգում:

Մենք կըհերքենք շօշափելի փաստերով, որ երբեք սեպարատիստներ չենք եղել և չենք, կազատուենք զանազան տխուր յիշատակի արժանի Վելիչկօների և սևահոջակ Սուլօրիներին ու Գրիգմունների մեզ վերայ բարցած ստոր զրպարտութիւններից: Կապացուցանենք, որ հայն իծննդին է իրն է և իւր ամբողջ հազեկան կազմով մի վերին աստիճանի խաղաղ կուլտուրական տարր է, ամենուրեք շինող, ծաղկեցնող և հարստացնող ոյժ: Նրա հոգուն խորթ են զանազան սեպիրատիւ արկածներ և անիրագործելի ձգտումներ: Նա գործնական է, խելացի, հանդարտ կեանքի սիրահար և կարօտ: Տուէք նրան միջոց իւր գաւակներին մայրենի լեզուով կըթութիւն տալու, իւր կրօնը դաւանելու, իւր խօսքն համարձակ արտասանելու, իւր հողերն ազատ մշակելու, ազատեցէք նրան անբնական պայմաններից, և այն ժամանակ նրա ամենասխերիմ թշնամին անգամ կը համողուի, որ նա անկեղծ բարեկամ է եւ ռուս ժողովրդի եւ ռուս պետութեան: Հայ ժողովրդի համբերողամտութիւնը սահման չունի: Նա որսակալ չէ, չարութիւնը մոռանում է շատ շուտ, իսկ բարութիւնը երբէք: Նա կը ների իւր ամենակատաղի թշնամիներին բոլոր նրանց գործած յանցանքները հէնց ա-

ուսլին օրը, երբ իրաւունք կը ստանայ ազատ շնչելու, երբ կը տրուին նրան տարրական մարդկային իրաւունքներ, երբ կըզգայ որ ինքը հպատակ է իրաւ մի կուլտուրական և քաղաքական պետութեան և ոչ կողակի մտրակին:

Թիֆլիսի քաղաքային իրաւասունները կազմում են մի մասնաւոր ժողով և իրանց միջից նշանակում Պետերբուրգ ուղարկելու պատգամաւորների կանդիտատներ: Պատահաբար երեք պատգամաւորներն էլ աղբով հայ կն լինում: Այս փոքրիկ և բոլորովին անգիտակցաբար տեղի ունեցած դէպքը գրգռում է մի կողմից վրացի ազգամոլներին, միւս կողմից էժանազին ազատամտութեան գոռանոց դափնիներին սիրահարներին: Բարձրանում է մի լրագրական այնպիսի աղմուկ, որ, կարծես, աշխարհը տակն ու եղաւ: Ոմն Բ. Մաչաբելի տպում է «Кавказъ» լրագրում Գրիգորունդի հոգով տոգորուած մի երեխայական նամակ հայերի դէմ: Մի քանի ուրիշ լրագրախօսներ էլ սկսում են հուր ու կարկուտ թափել հայ իրաւասունների վրայ: Կարծես, նրանք մի սոսկալի յանցանք են գործել, որ ուղղել անկարելի է:

Այս միջադէպի մասին բարձրացած աղմուկը հետաքրքրական էր միայն մարդկանց հոգեբանութեան տեսակէտից: Երբ մի մեծ գաղափար այնքան ընդհանրանում է, որ դառնում է նոյն իսկ միջնակարգ դպրոցների աշակերտների համար սովորական ֆոնադ, նա բարձր գոռացող և աղմուկ բարձրացնող պաշտպանների կարիք չունի: Խնդիրն ինքն ըստ ինքեան պարզ է և ամենքին հասկանալի և կարիք չը կայ ընդհանրացած գաղափարի մասին ջախջախուած վահաններ պատառոտելու: Բայց ամբոխի էժանազին ծափահարութեան սիրահար մարդիկ միշտ, ինչպէս յայտնի է, թուով շատ են: Այդ մարդկանց համար բաւական է մի թեթև շշուկ և իսկոյն ասպարէզ են ընկնում իրանց մաշուած ու տրորուած ֆոնազներով:

Ահա այդ էժանազին ծափերի հերոսներն էին, որ, իրանց մանկական աղաղակներով ասպարէզ ընկան, ցոյց տալու համար, թէ որքան իրանք բարձր են շովինիզմից: Այս կը նշանակէ օղապարիկով վեր բարձրանալիս երևակայել, թէ թևեր ունիս:

Միջադէպն այնքան աննշան էր, որ նրա դէմ բողոքողները միայն ծիծաղ զարթեցրին թէ հայ և թէ վրացի խելացի շրջաններում: Ոչ մի խելքը գլխին մարդ նրան նշանակութիւն

չը տուեց, նախ որ ազգերի համերաշխութեան և եղբայրութեան գաղափարը այդ տեսակ ջնջին միջնադէպերի հետ կապել, կընշանակէ նսեմացնել նրան, երկրորդ, որ մի խումբ իրաւասունների անգլիտակցարար գործած սխալը չի կարող վերաբերուել թիֆլիսի քաղաքային խորհրդարանի ամբողջ կազմին:

Մենք միանգամայն սառն և անտարբեր կը վերաբերուէինք, եթէ մեր իրաւասունների երեք ընտրելիներն էլ լինէին ազգով վրացի կամ ռուս և կամ թուրք: Քաղաքային խորհրդարանը քաղաքային շահերի պաշտպանն է և ոչ այս կամ այն ազգութեան ներկայացուցիչ: Այսօր հայեր, վաղը վրացիներ, միւս օրը թուրքեր—միևնոյնն է, թող միայն լինեն ազնիւ և խելացի մարդիկ մեր քաղաքի ներկայացուցիչները: Բաւական է, վերջապէս, ինչքան մը ջիւղներու դէմ հրացաններ արձակելով ցոյց տուեցինք մեր քաջութիւնը...

Անցեալ անգամ մենք հաղորդել էինք, որ վեհ. կաթուղիկոսի կողմից առանձին պատգամաւորութիւն է ուղարկուած Պ. Բուրգ չայ եկեղեցական կալուածների խնդրի համար:

Այժմ կարող ենք հաղորդել մեր ընթերցողներին, որ Պ. Բուրգից բարեյաջող տեղեկութիւններ են ստացուած թէ պատգամաւորութիւնից, թէ իշխ. Աբամելիք Լազարեանից և թէ մասնաւոր տեղեկութիւններով:

Կալուածների գրաւման մասին եղած յուլիսի 12-ի բարձրագոյն հրամանը պէտք է վերաքննուի, հայ դպրոցների բացման գործը կարգադրուում է, աքսորուած հայ եկեղեցականները շուտով յետ են դառնալու:

Պատգամաւորութիւնը, ներկայանալով Կովկասի նոր փոխարքայ կոմս Վօրօնցով-Պաշկովին, լսել է նորանից յիշեալ ուրախալի լուրերը և արդէն մեկնել է Պ. Բուրգից:

Օրաթերթերի այս կատարեալ սովի ժամանակ երիտասարդ գրագէտ պ. Գէորգ Մելիք-Կարազեօզեանը իրաւունք է ստացել հրատարակելու հայերէն մի օրագիր «Նովկասեան Բանբեր» վերնագրով: Պարոնը այդ լրագիրը հրատարակելու է կից ռուսերէն «Кавказский Вѣстникъ» ամսագրին, որ պ. Վ. Ղորղանեանից անցել է իրեն: Լրագիրը կըսկսուի հրատարակուել սեպտեմբերից—չը գիտենք ինչձև այդպէս ուշ: Յանկանուում ենք մեր նոր եղբայրակցին կատարեալ յաջողութիւն: